

	<<Յունիբանկ>> ԲԲԸ շահութաբաժինների վճարման կարգ	Կոդ՝ 01.02.5	Խմբագրություն՝ 1.1
		Հաստատված է Բանկի Խորհրդի 11.04.2016թ.-ի որոշմամբ	

Ընդհանուր հասանելի

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ	2
ԳԼՈՒԽ 2. ԿԱՐԳԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ.....	2
ԳԼՈՒԽ 3. ՇԱՀՈՒԹԱԲԱԺԻՆՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ	2
ԳԼՈՒԽ. 4 ՇԱՀՈՒԹԱԲԱԺԻՆՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՉԱՓԸ	3
ԳԼՈՒԽ 5. ՇԱՀՈՒԹԱԲԱԺԻՆՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ.....	4
ԳԼՈՒԽ 6. ՇԱՀՈՒԹԱԲԱԺԻՆՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅՈՒՄ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ	5

	<<Յունիբանկ>> ԲԲԸ շահութաբաժինների վճարման կարգ կարգ	Կող՝ 01.02.5 Հաստատված է Բանկի խորհրդի 11.04.2016թ.-ի որոշմամբ	Խմբագրություն՝ 1.1
---	--	--	--------------------

Ընդհանուր հասանելի

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 1.1. Սույնով սահմանվում է <<Յունիբանկ>> ԲԲԸ (այսուհետ՝ Բանկ) շահութաբաժինների վճարման կարգի նպատակները, շահութաբաժինների չափի որոշման սկզբունքները, Բանկի կողմից շահութաբաժինների վճարման կարգը, շահութաբաժինների տրամադրման բնագավառում Բանկի որոշումներ ընդունող մարմինների իրավասությունների բաշխումը:
- 1.2. Սույն կարգը կիրառվում է Բանկի Բաժնետերերի ընդհանուր ժողովի, Բանկի խորհրդի, վարչության, վարչության նախագահ-գործադիր տնօրենի, իրավաբանական դեպարտամենտի, ֆինանսական տնօրինության կողմից:
- 1.3. Սույն կարգը Բանկի հեռանկարային զարգացման ծրագրի իրականացման միջոց է, որը հիմք է հանդիսանում Բանկի շահութաբաժինների վճարման գործընթացը կանոնակարգելու համար:
- 1.4. Շահութաբաժինների վճարման կարգի հիմնական դրույթներն ու սկզբունքները կարող են փոփոխվել՝ ելնելով տնտեսական իրավիճակների և (կամ) Բանկի հեռանկարային զարգացման ծրագրով նախատեսված նպատակների փոփոխություններից:
- 1.5. Շահութաբաժինների վճարման կարգում փոփոխությունները կատարվում են Բանկի խորհրդի որոշմամբ:
- 1.6. Շահութաբաժինների վճարումը իրականացնելիս Բանկը ղեկավարվում է ՀՀ բանկային, բաժնետիրական ընկերությունների գործունեությունը կարգավորող օրենսդրությամբ, ՀՀ նորմատիվ իրավական այլ ակտերով, Բանկի կանոնադրությամբ, սույն փաստաթղթով և ներքին իրավական այլ ակտերով:
- 1.7. Կարգում ամրագրված դրույթները Բանկի հասարակ (սովորական) անվանական բաժնետոմսերի սեփականատերերի կողմից չպետք է ընկալվեն որպես շահաբաժինների վճարման երաշխավորում:
- 1.8. Կարգը հանդիսանում է շահույթի օգտագործման վերաբերյալ Բանկի ներքին իրավական ակտը, որի նպատակն է շահաբաժինների վճարման և չափի որոշման դեպքում ապահովել Բանկի և իր բաժնետերերի միջև շահերի հավասարակշռությունը, ինչպես նաև Բանկի ընթացիկ ներդրումային գրավչության բարձրացումը և կապիտալի շարունակական աճի ապահովումը:

ԳԼՈՒԽ 2. ԿԱՐԳԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

- 2.1. Շահութաբաժինների վճարման կարգի նպատակներն են՝
 - շահութաբաժնեության այնպիսի մակարդակի ձևավորումը, որը թույլ կտա բանկին ընդլայնել իր գործունեությունը, մնալ մրցունակ և, անհրաժեշտության դեպքում, համալրել իր կապիտալը,
 - Բանկի բաժնետերերի համար ընդունելի եկամուտների մակարդակի ապահովումը,
 - Բանկի հեռանկարային զարգացման ծրագրով նախատեսված համապատասխան ցուցանիշների ապահովումը:

ԳԼՈՒԽ 3. ՇԱՀՈՒԹԱԲԱԺԻՆՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

- 3.1 Բանկի շահութաբաժինների վճարման կարգը հիմնված է հետևյալ սկզբունքների վրա՝
 - իրավաչափության պահպանում՝ Բանկի կողմից գործընթացի իրականացում համաձայն ՀՀ օրենսդրության, ինչպես նաև Բանկի կանոնադրության և ներքին իրավական ակտերի,

	<<Յունիբանկ>> ԲԲԸ շահութաբաժինների վճարման կարգ կարգ	Կողմ 01.02.5	Խմբագրություն՝ 1.1
		Հաստատված է Բանկի Խորհրդի 11.04.2016թ.-ի որոշմամբ	

Ընդհանուր հասանելի

- շահութաբաժինների վճարման գործընթացում իրավասությունների բաշխում՝ Բանկի կառավարման մարմինների (Բաժնետերերի Ընդհանուր Ժողով և Խորհուրդ) իրավասությունների սահմանում,
 - շահութաբաժինների վճարում Բանկի զուտ շահույթից կատարվող մասհանումների հաշվին:
- 3.2** Բանկի բաժնետերերին շահութաբաժիններ բաշխելն արգելվում է, եթե դրանք բաշխելու պահին Բանկի կրած կորուստները (վնասները) հավասար են կամ գերազանցում են այդ պահին Բանկում առկա չբաշխված զուտ շահույթի գումարը:
- 3.3** Բանկն իրավունք չունի շահութաբաժիններ հայտարարել և վճարել, եթե Բանկի զուտ ակտիվների արժեքը պակաս է նրա կանոնադրական հիմնադրամից կամ շահութաբաժիններ վճարելու արդյունքում կպակասի դրա չափից:
- 3.4** Բանկն իրավունք չունի որոշում ընդունել տեղաբաշխված բաժնետոմսերի շահութաբաժինների վճարման մասին, եթե լրիվ չի վճարվել Բանկի կանոնադրական հիմնադրամը:
- 3.5** Ընկերության կողմից լրացուցիչ արտոնյալ հաստատագրված բաժնետոմսերի տեղաբաշխման կարգը, պայմանները, վճարվող շահութաբաժինը և լուծարային արժեքը կանոնակարգվում են ՀՀ գործող օրենսդրությամբ և Բանկի կանոնադրությամբ:

ԳԼՈՒԽ. 4 ՇԱՀՈՒԹԱԲԱԺԻՆՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՉԱՓԸ

- 4.1. Բանկը կարող է հայտարարել և վճարել եռամսյակային, կիսամսյակային (այսուհետ՝ միջանկյալ) կամ տարեկան շահութաբաժիններ:
- 4.2. Սովորական /հասարակ/ բաժնետոմսերի գծով շահութաբաժինների վճարումը.
- 4.2.1. Միջանկյալ շահութաբաժնի չափը չի կարող գերազանցել նախորդ ֆինանսական տարվա արդյունքներով բաշխված և/կամ հաշվարկված շահութաբաժնի 50 տոկոսը:
- 4.2.2. Տարեկան շահութաբաժինների չափը չի կարող պակաս լինել արդեն վճարված միջանկյալ շահութաբաժինների չափից:
- 4.2.3. Եթե ընդհանուր ժողովի որոշմամբ տարեկան շահութաբաժինների սահմանված չափը հավասար է արդեն վճարված միջանկյալ շահութաբաժինների չափին, ապա տարեկան շահութաբաժիններ չեն վճարվում:
- 4.2.4. Եթե ընդհանուր ժողովի որոշմամբ տարեկան շահութաբաժինների չափը սահմանվում է արդեն վճարված միջանկյալ շահութաբաժինների չափից ավելի, ապա տարեկան շահութաբաժինները վճարվում են սահմանված տարեկան շահութաբաժնի և տվյալ տարում արդեն վճարված միջանկյալ շահութաբաժինների գումարի տարբերությամբ:
- 4.3. Արտոնյալ բաժնետոմսերի գծով՝
- 4.3.1. Արտոնյալ հաստատագրված բաժնետոմսերի դիմաց վճարվող տարեկան շահութաբաժնի չափը հաշվարկվում է տարեկան 5 % տոկոսադրույքով՝ այդ բաժնետոմսերի անվանական արժեքի նկատմամբ:
- 4.3.2. Արտոնյալ բաժնետոմսի գծով շահութաբաժինը՝ ամբողջությամբ կամ մասամբ, ենթակա չէ վճարման, եթե դա կհանգեցնի բանկի տնտեսական նորմատիվներից որևէ մեկի խախտմանը կամ բանկի ֆինանսական վիճակի վատթարացմանը, ընդ որում՝
- ա. շահութաբաժնի լրիվ կամ մասնակի չվճարումը ենթակա չէ կուտակման և վճարման հետաձգայում,
- բ. բանկի և արտոնյալ բաժնետիրոջ միջև որևէ իրավաբանական փաստաթղթով չի կարող նախատեսվել որևէ սահմանափակում բանկի համար շահութաբաժնի ամբողջական կամ մասնակի

	<<Յունիբանկ>> ԲԲԸ շահութաբաժինների վճարման կարգ կարգ	Կող՝ 01.02.5	Խմբագրություն՝ 1.1
		Հաստատված է Բանկի Խորհրդի 11.04.2016թ.-ի որոշմամբ	

Ընդհանուր հասանելի

չվճարման դեպքում, ինչպես նաև որևէ իրավաբանական փաստաթղթով չի կարող նախատեսվել այդպիսի սահմանափակումներ նախատեսելու իրավունքի տրամադրում արտոնյալ բաժնետիրոջը, բացառությամբ եթե սահմանափակումը վերաբերում է սովորական բաժնետոմսերի գծով շահութաբաժինների վճարմանը: Ընդ որում, սովորական բաժնետոմսերի գծով շահութաբաժինների վճարման՝ սույն պարբերությամբ նշված սահմանափակումը կարող է վերաբերել միայն այն ժամանակահատվածին, որի ընթացքում ամբողջությամբ կամ մասամբ չի վճարվել արտոնյալ բաժնետոմսին հասանելի շահութաբաժինը:

ՊԼՈՒԽ 5. ՇԱՀՈՒԹԱԲԱԺԻՆՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

- 5.1. Շահութաբաժինները վճարվում են Բանկի զուտ շահույթից կատարվող մասհանումների հաշվին:
- 5.2. Շահութաբաժինը Բաժնետերերի Ընդհանուր Ժողովի որոշմամբ կարող է վճարվել բացառապես տարեկան արդյունքներով:
- 5.3. Սովորական բաժնետոմսերի գծով շահութաբաժինը վճարվում է դրամով, իսկ կանոնադրությամբ նախատեսված դեպքերում նաև այլ գույքով, այդ թվում՝ Բանկի բաժնետոմսերով:
- 5.4. Արտոնյալ հաստատագրված բաժնետոմսերի գծով շահութաբաժինները ենթակա են վճարման միայն Բանկի զուտ շահույթից և /կամ/ դրա հաշվին ձևավորված հիմնադրամներից: Արտոնյալ բաժնետոմսերի գծով շահութաբաժինը վճարվում է միայն դրամով:
- 5.5. Բաժնետերերին իրենց բաժնետոմսերի դիմաց շահութաբաժինների վճարումները Բանկի կողմից չեն երաշխավորվում:
- 5.6. Բանկի Բաժնետերերի Ընդհանուր Ժողովն իրավունք ունի որոշում ընդունել բաժնետոմսերի դիմաց շահութաբաժիններ չվճարելու վերաբերյալ:
- 5.7. Տարեկան շահութաբաժինների վճարման վերաբերյալ որոշումը ընդունվում է Բանկի տարեկան ընդհանուր ժողովի կողմից՝ Բանկի Խորհրդի առաջարկության հիման վրա: Ընդհանուր ժողովը սահմանում է տարեկան շահութաբաժինների չափը, ինչպես նաև դրանց վճարման կարգը և ժամկետները:
- 5.8. Միջանկյալ շահութաբաժինների վճարման վերաբերյալ որոշումը ընդունվում է Բանկի Խորհրդի կողմից: Բանկի Խորհուրդը սահմանում է միջանկյալ շահութաբաժինների չափը, ինչպես նաև դրանց վճարման կարգը և ժամկետները:
- 5.9. Տարեկան շահութաբաժինների վճարման ժամկետը սահմանվում է Բաժնետերերի ընդհանուր ժողովի՝ շահութաբաժիններ վճարելու մասին որոշմամբ:
- 5.10. Միջանկյալ շահութաբաժինների վճարման ժամկետը սահմանվում է Խորհրդի՝ միջանկյալ շահութաբաժիններ վճարելու մասին որոշմամբ, բայց ոչ շուտ, քան տվյալ որոշման ընդունման պահից 30 օր հետո:
- 5.11. Շահութաբաժինների յուրաքանչյուր վճարման համար Բանկի Խորհուրդը կազմում է շահութաբաժիններ ստանալու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակ, որում պետք է ընդգրկվեն՝
 - միջանկյալ շահութաբաժիններ վճարելու դեպքում՝ Բանկի այն բաժնետերերը, որոնք ընդգրկվել են Բանկի բաժնետերերի ռեեստրում՝ Խորհրդի միջանկյալ շահութաբաժիններ վճարելու մասին որոշման կայացման օրվանից առնվազն 10 օր առաջ,
 - տարեկան շահութաբաժիններ վճարելու դեպքում՝ Բանկի այն բաժնետերերը, որոնք ընդգրկվել են Բանկի բաժնետերերի ռեեստրում՝ Բանկի բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու օրվա դրությամբ:

	<<Յունիբանկ>> ԲԲԸ շահութաբաժինների վճարման կարգ կարգ	Կոդ՝ 01.02.5	Խմբագրություն՝ 1.1
		Հաստատված է Բանկի Խորհրդի 11.04.2016թ.-ի որոշմամբ	

Ընդհանուր հասանելի

5.12. Շահութաբաժինների տրամադրման վերաբերյալ որոշումներն ընդունվում են համաձայն գործող օրենսդրության, Բանկի կանոնադրության, Բանկի ռազմավարական ծրագրի և սույն կարգի:

ԳԼՈՒԽ 6. ՇԱՀՈՒԹԱԲԱԺԻՆՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ

6.1 Շահութաբաժինների վճարումը ենթադրում է դրա մշակման, հաստատման և իրականացման •ործընթացում Բանկի կառավարման մարմինների իրավասությունների հստակ բաշխում:

- **Բաժնետերերի ընդհանուր ժողովը՝**

- ✓ Հաստատում է Բանկի կանոնադրությունում համապատասխան փոփոխությունները, որոնք վերաբերում են շահութաբաժիններին:

- ✓ Ընդունում է Բանկի տարեկան շահութաբաժինների վճարման մասին որոշումը և հաստատում է տարեկան շահութաբաժինների չափը:

- ✓ Անհրաժեշտության դեպքում՝ վերանայում և հաստատում է սույն կարգը:

- **Բանկի խորհուրդը՝**

- ✓ Հաստատում է սույն կարգը,

- ✓ Ներկայացնում է Բանկի բաժնետոմսերի դիմաց վճարվող տարեկան շահութաբաժինների վճարման կարգի վերաբերյալ ժողովին առաջարկություններ, այդ թվում՝ կազմում է շահութաբաժինների յուրաքանչյուր վճարման համար շահութաբաժիններ ստանալու իրավունք ունեցող Բանկի մասնակիցների ցուցակը:

- ✓ Սահմանում է Բանկի բաժնետոմսերով միջանկյալ շահութաբաժինների վճարման կարգը:

- **Բանկի վարչությունը՝**

- ✓ Բանկի Խորհրդին ներկայացնում է բաժնետոմսերի դիմաց վճարվող միջանկյալ շահութաբաժինների վճարման կարգի վերաբերյալ առաջարկություններ: